ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401,
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«01» դեկտեմբերի 2023 թ.

№ 23/220722-23

Ա/Ձ ՄԱՍԻՍ ԼԱԼԱՅԱՆ ՅՈՒՐԻԿԻ
/Էլ.հասցե՝ lmul61@mail.ru/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Մասիս Լալայան Յուրիկի միջև կնքվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/99-1 ծածկագրով Կենտրոն վարչական շրջանի կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և №-2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդհանուր բաժնի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող №-2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետները և N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջները՝ բացառությամբ եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի աղբահանության վարձավճարների մուծման անդորրագրերի մատյանների առանձնացումից, որը պետք է կարգավորվեր մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի կարգավորումից հետո, քանի որ Տեխնիկական բնութագրի առաջին պարբերությամբ նշվում է. «Մշտական պահպանության գործերի առանձնացում և ձևավորում, փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման միջոցով պետության և հասարակության համար պատմամշակութային կամ գիտական արժեք ներկայացնող փաստաթղթերի առանձնացում համաձայն ՀՀ կառավարության 2019թ. ապրիլի 4-ի հ.397-Ն որոշմամբ հաստատված «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի»»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասիս Լալայան Յուրիկի Ա/Ձ խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, ինչպես նաև Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդհանուր բաժնի 29.11.2023թ. Ն/63726-23 գրությամբ ներկայացված պարզաբանումները՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ և 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ծանոթություն: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍԱՄՎԵԼ ՂՈՒԿԱՍՅԱՆ**